

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՌՈՍՏՈՄԽԱՆ ԷՆՕԿՈԼՈՊԵԱՆԸ

ԶՈՀ ԳՆԱՑ ՄԻ ԴԱԻԱԴՐՈՒԹԵԱՆ

(19րդ դարի պատմական դէպք)

Հայերը, երբ 17րդ դարի սկիզբներում բնակութիւն հաստատեցին Իրանում, մինչեւ այժմ, իրենց մասնակցութիւնն են բերել պետական գործերում, լինի դա քաղաքական, զինուորական, մշակութային եւ ա՛յլ ասպարէզներում:

Այս պետական ու զինուորական գործիչներից 19րդ դարում, իրենց առանձին տեղն ունեն էնօկոլոպեան ընտանիքը, որոնք 1795-97 թուականներին, Թիֆլիսից Իրան են բերել Աղա Մահամադխան Ղաշարիի կողմից:

Էնօկոլոպեան ընտանիքը նախապէս կոչուելիս է եղել Զոհրաբեան, բայց յետոյ, իրենց գիտնական մի նախահօր տրուած տիտղոսով կոչուել են էնօկոլոպեան, որ վրացերէն լեզուով նշանակում է «գիտութեան շտեմարան»:

Էնօկոլոպեան ընտանիքի պետական ծառայութեան մէջ եղած դէմքերից, իր դիրքով ու գործունէութեամբ, արժանի տեղ ունի Մանուչարխանը, որ եղել է Սպահան նահանգի երկար տարիների քաղաքապետը, որն արքայից ստացել էր «Մոթամէդդովլէ» (պետութեան արժանահաւատ) տիտղոսը:

Այդ ընտանիքի մի ա՛յլ անդամն էր Սողոմոնխանը (Սուլէյմանխանը), որն եղել է Սպահանի զօրքի հրամանատարը Սարթիփ (զօրապետ) տիտղոսով: Սա ունէր մի որդի Ռոստոմխան անունով, որ գտնուում էր հօր զինուորների մէջ եւ յայտնի էր իր քաջութեամբ ու երիտասարդական արիւնով, որով մեծ քաջութիւն էր ցուցաբերել ապստամբ ցեղախմբերին ճնշելու գործում եւ սիրելի դարձել ոչ միայն հայ աղջիկներին, այլ պարսկուհիներին անգամ, յատկապէս մի պարսիկ իշխանուհու, որ ցանկացել էր ո՛րեւէ գնով իր կեանքը կապել նրա հետ:

Իշխանուհին տեսնելով որ սովորական միջոցներով չի՝ կարող հասնել իր նպատակին, որի մի արգելքն էր նրա քրիստոնեայ լինելն է, ուստի դիմում է խարդախութեան եւ յանձնարարում է իր մտերիմներէից մէկին ասելու, որ ես երազում տեսայ, որ դու պարսկացել էիր, թէեւ Ռոստոմխանը նրա ասածին ուշադրութիւն չի դարձնում, բայց նա Ռոստոմխանի անունից, գաղտնի ձեւով, մի գրութիւն է ուղղում Մոթամէդդովլային եւ թէ Արքային, որ իբր ինքը՝ Ռոստոմխանը, իսլամութիւն է ընդունել եւ այդ առթիւ Արքայի կողմից, որպէս գնահատանք, յատուկ մի նուէր է ուղարկում նրան:

Այս կեղծ արարքի դիմաց, Ռոստոմխանը մնում է անեղ վիճակում եւ ստիպւում է գնալ Թեհրան եւ հերքել իրեն համար յօրինուած այդ սուտը ու վերադառնալ Սպահան, բայց այդ օրերին տեղի պալատում, ինչ որ մի հիւրասիրութեան ժամանակ հիւանդանում է (իբր թունաւորում են), ապա քահանայի ձեռամբ ճաշակւում է, խոստովանում եւ մահանում է:

Նրա մահուան եւ թաղման մասին, մի թղթակցութիւն կայ տպագրուած Հնդկաստանում լոյս տեսնող «Ազգասէր»ի մէջ*, որտեղ շատ յուզիչ ձեւով է նկարագրւում անցուղարձը, որից միայն մի փոքր պարբերութիւն բերում ենք ստորեւ.

«Սուլէյմանխան սարքիփն մին որդի ունէր քսան տարի հասակով, մին չնարի պէս ջուան, պարթեւ մարդ էր, այլագգիֆ քշմամիֆ գրեցին Թէհրան Մահամադ Շահին, որպէս քէ քուրֆացել այ, Շահն էլ խալաթ եւ ֆարման ուղարկեց, որ Ասպահանու մեծն՝ այսիմֆն ֆալամթարն կլինի: Հայերն եւ ինքն այս բանը լսելով մեծ տարակուսութեան եւ տխրութեան մէջ անկան, էսպէս էլ Ջուղայեցիք: Այս խնդն ջուանն պարտաւորուեց գնալ Թէհրան Շահի մօտն, իւր քուրֆամալն ստել. որպէս գնաց արար քրիստոնէութեամբ եկաւ կրկին Ասպահան: Յետ այնու փոքր ժամանակից յետոյ, Ակտոքը 28ին վախճանուեց Հաֆտդաստումն,** խոստովանուեց հաղորդ եւս ստացաւ յառաջ քան թէ իւր մահն...»:

Այնուհետեւ յօդուածագիրը յուզիչ տողերով նկարագրում է թէ ինչպէս նրա դիակը, վարդապետներով, քահանաներով, խաչ ու խաչվառով ու ժամբրգութեամբ եւ հոծ ժողովրդի ներկայութեան բերում են եկեղեցին, յետոյ էլ տանում են վանք եւ այնտեղ անփոփոմ. ուր այժմ եւս կայ գերեզմանը:

Ինչպէս որ պարսիկները իրենց սուգի ամսին (Մոհառամին) տղաներին սեւ շորեր են հագցնում եւ ձիերի վրայ նստեցնում ու յարդցանում գլխերնին, նոյն ձեւով էլ 17 քորֆալ (դիակատիպ) պատրաս-

* «Ազգասէր», Կալկաթա, 6 Սեպտ. 1846, համար 4, էջ 27-28:

** «Հաֆտդաստ»ը արքայական մի հին պալատ էր, զոր ակերուել է:

տած, ամէն մէկի հետ 400-500 պարսիկներ տխուր նուագով ու ախ ու վայ կանչելով, ու նաեւ 15 ձի զարդարած, վրաները զէնքեր դրած, ողբ ու կոծով առաջ էին գնում: Նոյնպէս վանքի շուրջը մօտ 500 ձիաւորներ կանգնած, իրենց հրացանները գլխիվայր բռնած, որպէս սուգի նշան, իսկ երբ դիակը հողին յանձնուեց, երեք անգամ հրացանները կրակեցին: Այսպէս զինուորական ու եկեղեցական, մեծ շուքով հողին յանձնեցին Ռոստոմիսանի դիակը:

Նրա գերեզմանը գտնուում է Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի զանգակատան մէջ, որի վրայ դրուած է 197×78 սմ. մեծութեամբ մի գեղեցիկ տապանաքար, որի երկայնքին երկու կողքերին, բարձրաքանդակուած են 13ական զինուորական հագուստներով հրացանակիրներ, իսկ վերին ու ներքին կողմերում՝ մի իշխանուհի, նստած առաքաստի մէջ, որի դիմաց, ձիու վրայ նստած մի իշխան, որ մատը զարմացական ձեւով դրել է շրթունքների վրայ, իշխանի առջեւից գնում է մի հետիոտն զինուոր, իսկ ետեւից՝ մի ձիաւոր: Օդի մէջ երեւում են մի քանի հատ թռչող բազէներ:

Տապանաքարի մակերեսի վրայ ագուցուած է մի մարմարեայ քար 88,5×45,5 սմ. ծաւալով, որի վրայ քանդակուած է հետեւեալ արձանագրութիւնը.

ՀԱՆԳԻՍՏ

ՊԱՅԱՋԱՏ ՌՈՍՏՈՄԵԱՆԻ

ՍԱՄԸ ԴՍՎԼԷ ՍՈՂՈՄԵԱՆԵԱՆ

ԷՆԱԿՕԼՈՓԵԱՆՑ

Ի 17 ՀՈԿՏ. 1843

Ի ՀԱՍԱԿԻ 21 ԱՄԱՑ

ՋԵՐՄ Ի ՀԱԽԱՏ ՔՐԻՍՏՈՍԻ,

ԱՏԵԱՑ ԶՇՈՒՔ ԱՇԽԱՐՀԻ,

ԱՐԲ ԶՄԱՀ, ԼԵԱԼ ՆԱՀԱՏԱԿ,

ԹՈՂԼՈՎ ԶՕՐՀՆԵԱԼ ՅԵՇԱՏԱԿ:

Տապանաքարի արձանագրութիւնը եւս մի վկան է նրա հետ կատարուած պատահարի:

Վերոյիշեալ անցուղարձի առթիւ եղած թղթակցութիւնները, գրուած Զուղայի Առաջնորդի եւ բժիշկ Դաւիթիսան Դաւթեանի կողմից, գտնուում են Սբ. Ամենափրկիչ վանքի արխիւում, որոնք մի ա՛յլ առիթով կ'աշխատենք յանձնել մամուլին:

ԼԵՒՈՆ ՄԻՆԱՍԵԱՆ